Հովհաննես Հովհաննիսյան

Արազն եկավ լափին տալով . . .

Արազն եկավ լափին տալով,
Ժեռ քարերին, ափին տալով .
Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը,
Չոր գլուխս տափին տալով:

Ա՛յ իմ Արազ, ջուրըդ վարար,
Սիրուն յարիս յարաբ տեսա՞ր .
Ես չըհասա իմ մուրազին,—
Արա՛զ, յարաբ կարոտս առա՞ր:

Ամպերն եկան Մասիս սարին,
Կարոտ մնացի ես իմ յարին .
Աստոծ սիրես, էրված սրտիս
Ջուղաբ բերես եկող տարին:

Գիշերն անքուն գիր կըգրեմ .
Արտասունքս գետ կըշինեմ .
Արա՛զ, ծեգը ջրիդ չառած՝
Իմ սև դարդը քեզ կըբերեմ:

Կասես՝ շողքը քարին ընկավ,
Կըրակըն իմ սրտին ընկավ .
Կամար ունքից, թուխ աչքիցը

Ցավն իմ ջիվան ջանին ընկավ:

Արազն եկավ լափին տալով,
Ժեռ քարերին, ափին տալով .
Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը,
Չոր գլուխս տափին տալով . . .